

Հայրի նզովքն դադարիեցաւ մեր հառով .  
մէտկան եզրարց միտոթեան համար ,  
այս եւս տպօրինի էր , որովհետեւ  
Պատրիորք մի և քանի մի ժողովականք  
իրաւունք չըւնէին եկեղեցւոց ստհ-  
մանագրութիւնը փոխելու , մտնա-  
ւանգ որ ժամանակը չըւտով հաւառ  
ուեց , որ Հոռովհեականը Տաթեւացի  
Ներկն ու Եւսոնի Տօնարի և Քաղկե-  
քոնի ժողովին նզովքէն չէին փախած ,  
այլ բառն եկեղեցւոց դրէեն : Ուրիշն  
Երեմիա հայրը , փսխանակ Աթոռաց  
օրացացը պամարակելու , թողիւր ան-  
գիտութիւնը յանդիմանէ և բարեհա-  
ճի գէթն ներկայ տարւոն մէջ իւր օ-  
րացուցի ամենամեծ մասն ուղղելու ,  
որով մեղանցած է նախնի Հարց եկե-  
ղեական Այսհմանազրութեան դէմ :

### ԵՎԼԱԾԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՍՄԻՐՈՒԹԻՒՆԸ

Եղիշէ վարդապետն կրտսէր թարգ-  
մանցաց կամ Երկրորդ աշուկերտաց  
գառէն է , Արդքան Ամիկոնեանի ա-  
տենադպիրն , որ թէպէտ իւր գրուա-  
ծոց խոպագիրներուն մէջ սովորաբար  
գորտառիւ կը կոչուի , բայց Ատմիկո-  
նեան նախարարական տան Եպիսկո-  
պան էր , որ և Արտաշատու ժողովի  
Եպիսկոպոսաց կարգին մէջ իւնաւա-  
նի Նշունք Եպիսկոպոս Ամառոնաց Հա-  
յաստանեաց աշխարհի հարստանաւ-  
րութեան և հալածանաց օրերուն ա-  
կանատես եղաւ Եղիշէ , տեսաւ ուուրբ  
Ապրանաց և նարա քաջ ընկերաց նա-  
հատակութիւնը , տեսաւ ընտիր ըն-  
տիր նախարարաց բանտարկութիւնը  
և գերութիւնը , Հայ տիինանց քրիս-  
տոնէական արիութիւնը , տեսաւ Հայ-  
քենեաց աւերումը պարսկական բըռ-  
նութիւնն , և սրբն ցաւէն աւանձ-  
նացաւ Ամիաց լեռները , և այն տեղէն

Ոչոտոնեանց գաւառը , ուր և կիրեց  
իւր կեանքը :

Եղիշէ թօղած է նիդնագիր ընտիր  
երկասիրութիւններ , որոց մէջ կը փայ-  
լին իւր աղիւր զգացման գններն ու քը-  
րիստոնէական իմաստութիւնն : Այս  
երկասիրութեանց մէջ ամենէն նշա-  
նաւորն է Պատմովիտն կամ Ա պրտանց  
և Հայոց պատիբանին՝ զըր գրած է Ա ա-  
միկնեան Դաւիթ Երիցու հայցմամբ :  
Այս պատմութիւր կը բացիկանայ մէկ  
ընծայականէ առ Դաւիթ Երէցն եւ  
ութն յեղանակներէ կամ գլուխներէ ,  
պատմական անցոց յաջորդութեն կար-  
գաւ , որոց վերջինը առաւել սուրբ  
քահանացից չարչարանքները և հայ կա-  
նանց քրիստոնէական բարեպատշուութիւ-  
ները կը պարունակէ , ուսափի և կը կոչ-  
ուի Արքաց Խօնի յեղանակին : Եղիշէի  
պատմութեն մէջ նոյնպէս կը գտնուի  
1. Յազկերոսի շրջաբերական կրոշրտա-  
կը սրով իւր աէկրութեան հպատակ ագ-  
գերը կը հրաւ իրէ ՚ի պատերազմ ընդու-  
գէմ ՚իւր շանաց , 2. Այիններսէ հրա-  
բամանատարի նամակը զըր մոգերու խոր-  
հրագով կը գրէ Հայոց ազգին նախ  
պարսկական գէնը բացատրելով և քը-  
րիստոնէութիւնը պամարակելով և ա-  
պա կը ստիսէ Հայոց ազգը ՚ի մոգու-  
թիւն և յարեւապաշտութիւն , 3.  
Հայոց մերժուղական պատափանը , զըր կը  
գրէն Արտաշատութեն ժողով գումա-  
րուած եպիսկոպոսները նախարարաց  
և բոյր բազմութեան հաւանութիւ-  
ն քրիստոնէական անվեհեր աղաստու-  
թեամբ , 4. Հորվարտի կամ Գիր պա-  
շատանց Հայոց աշխարհին , զըր կը գը-  
րեն Յունաց թէնտու Կայսեր և ոգ-  
նութիւն կը ինգրեն , բայց թէնտու  
կը մեռանի և Ա արկիանոսը թագաւու-  
րելով փոխանակ Հայոց օգնելոց ընդու-  
հակառակն կը բարեկամանայ Պարսից  
թագաւուրի հետ և գաշնակութիւն

ուխտ կը հաստատէ, 5. Ա արդան Ուամիկնեանի և Կեռնդ երիցու քաջաշերական վայել՝ Վահաբանակիւները, որնցամազ Հայ ազգը կը խրախուսեն ի պատերազմ վասն պաշտպանութեան հայրենի օրինաց և ազատութեան եղեցւու:

Եղեցէի երկասիրութիւնը զնմանիր ամենեւին այն պատմագրութեանցը, որոնք ըսկ թագաւորաց կամ իշխանաց յաջորդութիւններ և գործքեր կը թուարկեն, այլ կը պատկերացընէ ամբողջ ազգի կամ ժողովովի պատմութիւնը, մանուկէն մինչեւ զառամեալ ծերունին, փափկասուն տիկինցէն մինչեւ զրահապստ զօրականը, և անարդէն մինչեւ պատսականը, միով բանիւ, Եղեցէի երկասիրութիւնը Հայոց բորոր ազգի նահատակութեան կամ քրիստոնէական զինուորութեան պատմութիւնն է ընդգեմ զրագեշտական մոլեւանդն մոգեկրօնութեան, ի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը կը տեսնենք այս խօսքերուն հաստատումը.

Ա Ա երեւէր այնուհեաեւ տառաւելտէրքան զծառայ և ոչ արաս փափկացեալ քաղեալ քան դգնուկ լիսացեալ և ոչ ոք քան զօր նուազեալ ի յարութենէ: Աի սիրո յօժարութեան էր ամենեւցուն սրանց և կանոննց, ծերոց եւ տղայոց և ամենայն միաբանելցոց ի Քրիստոս, Քանզի առհասպակ զի՞ զի՞ նուորութիւն զինուորեցան և զի՞ ագան զրահ հաւատաց պատուիրանին Քրիստոսի, միտով գօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջո արք և կանայք ... աեսանէին զանձինս իւրեանց իւրեւ զմեռեալ գիտունս և զիւրաքանչ չեւր գերեզմանս ինքեանը փորէին և կեանք իւրեանց ի մահ համարեալ էին և մահք իւրեանց անշուշտ կեանք»<sup>(1)</sup>.

Եղեցէի երկասիրութիւնը այն ընդունակ:

որի պատմագրութիւններէն է, որոնք պատմելին առելի կ'ուսուցանեն, գործքէն շորմառիմը բացատրելով և հետեւ անդէն պատճառը, և կամ անդրագարձութէն: Ա ասն զի, Եղեցէ կ'իւղեցւու ուխտի նահատակութեան պատմութիւնը հետ կ'ուսուցանէ միանցամայն և քրիստոնէական Եկեղեցւոյ նշանակութիւնը և էական պաշտօննը աշխարհիս լրայ, աստուածասէր առաքինեաց անձնազգհութեանը հետ՝ աստուածային սիրոյ մեծութիւնը, ուրաց ցողաց և անմիաբանից արարմանց հետ՝ թերահաւատութեան և անզուգութեան գմնդակութիւնը և նաեւ մոգական կրօնի խաւարամիտ փարդապետութիւնը: Եւ այս պատմական ընտիր յատկութիւնը զգալի է մանաւանդ այն հակապատկերներուն մէջ, որոց մանրանկար յատկանիշները կը նկարագրէ Եղեցէ Վնդնակալ թագաւոր մի (Յազկիերա) իւր արքացական աթուէն կ'որոտայ և միանդամայն կը գոզդալոյց, վասն զի մոգպաշտ է և անհաստատ խորհրդներով կը շարժի. իսկ ըսդ հակոռակին հպատակ ազգի զօրավոր մի, նախարար մի (Ա արդան և այլք) կը խրախուսի և կը խրախուսէ, վասն զի Քրիստոս զօրավար և զօրագլուխ կը աեւսնէ Ճշմարտութեան պատերազմին, և երկիւղը թերահաւատութիւն կը ճանաչէ: Թագաւորաց խորհրդական և պատգամատու մոգերը կը յուղին և կը տագնապին, վասն զի թանձրամած խաւարի մէջ են և ոգիները մարմոց մէջ արգելուած, ինչպէս կենդանի գերեզմանի մէջ. իսկ ընդհակառակին (Յովսէփ), Կեւանդ և այլք խաչ ձեռքիրնին անվեհեր պատերազմի գաշտը կ'իշնեն, վասն զի Ճշմարտիս Աստուծոց քահանաց են եւ Ճշմարտութեան համար մեռնիլը կեանք կը խուսավանին և կը քարազէն, Վնդագամակ

‘Հահանգի իշխան մի (1) պատկ տէր Այւ-  
նեաց) բարձրանալու ձգտման հետ՝  
կը քծնի և կը շուէ, վասն զի ուրացաղ  
է և իր հաւատը մարմնաւորին մէջ է.  
իսկ ընդ հակառակին՝ մատազ մանուկ  
մի, տկար կին մի՛ վայելքը և փափկու-  
թիւնը կ'արհամարհեն, վասն զի ճշշ-  
մարիտ վայելքութիւնը և մեծութիւ-  
նը աստուածային սիրոյ մէջ կը դաւա-  
նին :

Առհասարակ, եթէ մի կողմէն նկա-  
րագրուած է մագակրօնութիւնը իւր  
աղիտաբեր չարիքներով, միւս կողմէն  
եւս կենդանի պատկերացած է Քը-  
րիստոնէական Ճշմարիտ ոգին, մի ամ-  
բողջ ժողովրդի ուրախական զինուո-  
րութեամբ, սրով և ակներեւ կը տես-  
նուի Եղիշէի երկասիրութեան մէջ,  
որ Հայ աղդը սիրած է իւր երկրաւոր  
հայրենիքէն բարձր հայրենիք, այն է  
իւր քրիստոնէական եկեղեցին, պաշ-  
տած է իւր մարմնաւոր ազատութե-  
նէն բարձրագոյն ազատութիւն, այն  
է ազատութիւն խոճի, և հպատակած  
է մարդկային օրէնքներին բարձրագոյն  
օրինաց, այն է օրինաց Կյառու ծց: Վ ա-  
սին զի, այս է եղած նորա նահաւակու-  
թեան նշանաբանը.

“Հայր մեր՝ զի Եւտարանն գիտեմք,  
և մայր՝ առաքելական Եկեղեցի կա-  
թողիկէ . . . . (Օրէնք աստուածա-  
յին կացցեն թագաւոր ՚ի վերոյ ամե-  
նայնին (1) :

Եղիշէ ոչ միայն ականատես եղած  
է իւր նկարագրած պատմական անց-  
քերուն, այլ և լուսին զգացած է իւր  
սրուին մէջ, ինչպէս քաջաւթեան ու-  
րախական հանդէսները, նոյնպէս և  
հայրենիքաց աւերման տիսուր տեսա-  
րանները, ուստի և ճառագրած է իւր  
պատմութիւնը սրուի լեզուով սրուա-  
սունքով, Վ ասն զի ինքնին կ'ասէ Ա՛հա-

ոչ ըստ կամաց արտասուալից ողբարձ  
ճառագրեմք զբազում հայուածս, յոր-  
ուում պատահեցաք և մեք իսկ ականա-  
տես լինելով ո, սրով կ'ագդէ ոչ միայն  
Հայու, այլ և օսարականի սրուին, ինչ-  
պէս և ճշմարտիւ խստովանած է ո-  
տարազգի բանասէրներէն մէկը, ա-  
և մէլով. “Երբ Եղիշէ Կը կարդամ, կը  
հայանամ” (1) :

Պատմութենէն զատ՝ Եղիշէ եր-  
կասիրած է այլ և այլ ճառաեր և մեկ  
նութիւններ, որք են – 1. Ի՞ն իրարա-  
ժանաց, որ պատմութենէն յետոյ ա-  
մենէն ընտիր, սրտաշարժ և միանդա-  
մայն վսեմ գրուածքնն է, որով նախ  
մենաւորական կենաց գեղեցիկ նկա-  
րագիրը կը պատկերացընէ, յետոյ զեղ-  
ծումները և ապա կը յորդորէ յուղ-  
զութիւն և ՚ի զգացատութիւն: Ոիսա-  
ծանց ճառը այն գեղեցիկ յասկուռ  
թիւնը եւս ունի, որ հեղինակը միշտ  
խօսած է առաջին գեմքով և ուրիշնե-  
րը յանդիմանուծ ժամանակ՝ երբէք բա-  
ցառութիւն ըրած չէ իւր անձին,  
թէպէտ իւր գործքերէն կ'երեւի որ  
անբասիր է իւր կեանիը: Եյս ձեւ  
բանախօսութիւնը այն փափկասիրտ  
հեղինակներու յատկութիւնն է, ո-  
րոնք իւրեանց եղբարց թերութիւնը  
իւրեանց աեպհականը կը համարեն: 2.  
Եկեղեցիւն Յետուայ և բարուորաց: 3.  
Եկեղեցիւն պէտուական աղջիշ: 4. Լանուն  
և 5. Շատու ՚ի մկրտութիւն Քրիստո-  
սի, ՚ի մատնութիւնն, ՚ի Չարչարան-  
սին, ՚ի խանչելութիւնն և այլն, որոնք  
մեկնական և յորդորական պարզ գը-  
րուածքներ են հաւատացելոց հոգե-  
ւոր շնութեան համար և պատմու-  
թենէն ժամանակաւ կանխադայն գը-  
րուած կ'երեւին:

(1) Եղիշէն թարգմանուած է Անգլարէն, իտա-  
լիէն, Գաղղարէն և Արևարէն: